Ազգային ժողովի ընտրություններում ՀՀԿ կարգախոսը՝
«Անվտանգություն եւ առաջընթաց»

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՄԱՐՏԻ 2017Թ.
№ 07 (425)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Մխիթար Զաքարյան փորձառու համայնքապետին եւ արժանավոր սյունեցուն՝ մեր քվեն:

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Տեսնում եմ, որ ճիշտ ուղիով ենք ընթանում, պարզապես ինձ թվում է՝ փոփոխությունների տեմպը պետք է արագացնել»

Հարցազրույց օրվա թեմայով

Հարցազրույց Մեղրի համայնքի ղեկավար, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու Մխիթար Զաքարյանի հետ

Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը ՀՀԿ կողմից առաջադրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու եւ ընդգրկվել թիվ 12 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակում:
Այդ առիթով հանդիպեցինք Մխիթար Զաքարյանի հետ եւ զրույց ունեցանք:
Նախընտրական քարոզարշավի ելած թեկնածուի հետ, բնականաբար, առավել շատ ցանկացանք զրուցել առաջադրման մոտիվների, օրենսդիր մարմնի, պատգամավորի գործունեության վերաբերյալ նրա պատկերացումների եւ նախընտրական ներկա ընթացքի վերաբերյալ:
Մեր հանդիպումը համընկավ Մեղրի խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում նրա գործունեության 100 օրվան, ուստի եւ հետաքրքիր էր իմանալ՝ որքանո՞վ է կենսունակ համայնքների խոշորացման պետական ծրագիրը, արդյո՞ք բազմաբնակավայր համայնքը դիմանում է ժամանակի քննությանը:
Մեղրու տարածաշրջանը նաեւ բազում հիմնախնդիրներ ունի, ուստի եւ հետաքրքիր էր իմանալ՝ թեկնածուն ինչպե՞ս է պատկերացնում դրանց լուծումը:

Դարո՛ն Զաքարյան, 2008-16թթ. եղել եք Ագարակի ընտրյալ քաղաքապետը եւ լավ համայնքապետի համբավ ձեռք բերել: 2016թ. սեպտեմբերի 18-ին ընտրվել եք Մեղրի խոշորացված համայնքի ղեկավար, ընդ որում՝ ընտրողների բացարձակ մեծամասնության կամքով. քվեարկությանը մասնակցած 6407 հոգուց 6099-ը քվեարկել է Ձեր օգտին: Այդ պաշտոնում էլ, կարելի է արդեն ասել, որ հաջող մեկնարկ եք ապահովել: Բայց ահա լավ համբավ ունեցող համայնքապետը, որ ընտրվել է ընդամենը մի քանի ամիս առաջ, առաջադրվում է Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու: Ինչո՞ւ:

– Նախ նշեմ, որ մինչ իմ՝ պատգամավորի թեկնածու առաջադրվելը, տեղի ունեցավ ՀՀԿ Մեղրու եւ Ագարակի շրջանային կազմակերպությունների միավորում, որը տրամաբանական էր եւ ճիշտ մեկ խոշորացված համայնքի պայմաններում: Կուսակցության մարզային խորհրդի առաջարկությամբ ինձ ընտրեցին ՀՀԿ Մեղրու շրջանային կազմակերպության նախագահ:

Նոր սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է խորհրդարանական հանրապետություն, ինչը, բնականաբար, նոր իրավիճակ է ստեղծում՝ կարեւորելով կուսակցությունների դերն ու նշանակությունը: Հայաստանի հանրապետական կուսակցությունն է առաջադրել պատգամավորի թեկնածությունս, իսկ ողջ գործունեությանս ընթացքում ինձ հանձնարարված յուրաքանչյուր առաջադրանքի վերաբերվել եմ

▶ 3

ՀՀԿ նախընտրական ծրագրից

Հարգելի՛ հայրենակիցներ,

Դաշտում հունձ անող գյուղացուց մինչեւ բարձրաստիճան պաշտոնյա, գործարարից մինչեւ նեղ ոլորտային մասնագետ, առհասարակ՝ ցանկացած աշխատավոր մարդ, ցանկացած մարդ պետք է լինի մեծարված, գնահատված եւ մշտապես գտնվի պետության ուշադրության կենտրոնում, քանի որ նրանք բոլորն իրենցից ներկայացնում են մեկ միասնական եւ արժանապատիվ կերպար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ անկախ պաշտոնից, դիրքից, մասնագիտացումից եւ սոցիալական կարգավիճակից: Հենց այս մարդիկ՝ Հայաստանի քաղաքացիներն են մեր երազած ապագայի երաշխավորները՝ բանիմաց, ջանասեր, հպարտ եւ ապագային նայող, այսօր այդ ապագան իրենց տքնաջան աշխատանքով կերտող:

Մենք պատրաստ ենք աշխատելու յուրաքանչյուրի հետ, ով ցանկանում է քարը քարի վրա դնել՝ մեր ընդհանուր տունը շենացնելու համար:

Մենք հավատում ենք մեր ժողովրդին, հավատում ենք աշխատելու, սովորելու, նորն ընկալելու եւ կիրառելու նրա ունակությանն ու պատրաստակամությանը:

Մենք հենվելու ենք ամուր եւ ավանդական ընտանիքի արժեքների վրա: Այո՛, ընտանիքը դիտարկում ենք որպես ողջ հասարակության մանրակերտ եւ պետության առաջընթացի կարեւոր խթան: Եվ հենց ընտանիքին բնորոշ համերաշխությամբ էլ հետեւողականորեն լուծելու ենք մեր առջեւ ծառացած բոլոր խնդիրները:

Փաստ է, որ մենք այսօր ունենք խնդիրներ եւ դժվարություններ, բայց այն պատմական ճանապարհը, որը մենք անցել ենք, այն դժվարությունները եւ խոչընդոտները, որոնք մենք միասին հաղթահարել ենք, պարզապես վերիմաստավորելու դեպքում բավարար են, որպեսզի գիտակցենք, որ այսօրվա խնդիրները ոչ թե անհաղթահարելի են, այլ հենց հաղթահարելի են: Եկե՛ք լինենք լավատես, լցվե՛նք ամուր հավատով եւ դժվարությամբ ձեռք բերած մեր պետությունն անվտանգ պահելով, առաջ ընթանալով՝ դարձնենք այն մեր երազած ՀԱՅԱՍՏԱՆԸ:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Պատմականորեն հայ մարդը եղել է աշխատող եւ իր քրտինքով հավելյալ արժեք ստեղծող: Բարեխիղճ ձեռներեցին, գործարարին, աշխատող եւ աշխատանք ստեղծող մարդուն պետք է աջակցել, օգնել: Տնտեսական պայմանները պետք է հավասար լինեն բոլորի համար, իսկ հովանավորչությունը, ստվերային տնտեսությունը տեղ չեն ունենալու մեր իրականության մեջ: Այս ամենը ոչ ոք մեր փոխարեն չի անի, եւ մենք հաջողության հասնելուն այլընտրանք չունենք: Հետեւաբար, մենք շարունակական եւ բոլորի համար շոշափելի բարեփոխումներ ենք իրականացնելու տնտեսության մեջ, հարկային եւ մաքսային ոլորտներում, ինչը ներառելու է փոփոխություններ օրենսդրական եւ կադրային քաղաքականության մեջ:

Այսօր Հայաստանի տնտեսությանը անհրաժեշտ են արդյունավետ լուծումներ: Պետք է ձեւավորվի այնպիսի միջավայր, որտեղ տեղական արտադրությունն իր որակյալ եւ միաժամանակ հասանելի ապրանքատեսակների հաշվին շուկայում կփոխարինի ներմուծվող ապրանքներին:

Տնտեսական քաղաքականության օրակարգի առաջին հորիզոնականում են լինելու՝

- մակրոտնտեսական կայունության հետագա ապահովումն ու ամրապնդումը,
- ներդրումային միջավայրի հետագա բարելավումն ու նոր ներդրումների ներգրավումը,
- տնտեսավարող սուբյեկտներին, այդ թվում՝ ՓՄՁ-ներին, անհրաժեշտ օժանդակության եւ տնտեսական խթանների տրամադրումը,
- տնտեսական կյանքում հավասար մրցակցային պայմանների ապահովումն ու հովանավորչության վերացումը:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Մեր ախտորոշումն է. չնայած գործարար միջավայրը գնահատող միջազգային կազմակերպությունների հարցման արդյունքներով արձանագրված առաջընթացին՝ Հայաստանում դեռեւս՝

- առկա է վարչարարություն իրականացնող մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների անհամաչափ կամ անհավասար կիրառում,
- ցածր է դատական համակարգի արդյունավետությունը՝ վարչական կամ տնտեսական վեճերի, ինչպես նաեւ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցերում:

Արդյունքում՝

- ցածր է «գործարար միտք - գործարար նախաձեռնություն - գործարար ծրագրերի իրականացում» շղթայի արդյունավետությունը,
- ՀՆԱ-ում ցածր է փոքր եւ միջին բիզնեսի մասնակցությունը,
- բարձր են բիզնես ծրագրերի անընդհատության ռիսկերը,
- ցածր է արդար ձեռնարկատիրության միջոցով հաջողության հասնելու հավատը:

Մեր նպատակն է. բիզնեսի համար անկանխատեսելի ռիսկեր պարունակող գործարար միջավայրից անցում ապահովել դեպի այնպիսի միջավայր, որտեղ պետության կարգավորումներն ունեն նվազագույն անհրաժեշտ ծավալ, բարձր հստակություն, համաչափ եւ հավասար կիրառություն, կայունություն եւ կանխատեսելիություն, իսկ բիզնես վեճերը կարգավորվում են արդար եւ արդյունավետ (հատկապես՝ ժամանակային առումով):

Այս ուղղությամբ արագ անցում կատարելու նպատակով պետք է առաջնահերթ լուծվեն հետեւյալ խնդիրները՝

- նոր գործարար նախաձեռնություններին պետական աջակցության մեխանիզմների լրացում նոր՝ արդյունավետ գործիքներով,
- ՓՄՁ-ների նախաձեռնությունները կենսունակ բիզնես ծրագրեր դարձնելու գործընթացի՝ արդյունավետ պետական աջակցության մեխանիզմների ստեղծում,
- խոշոր ներդրումային ծրագրերի ընթացքի մշտադիտարկում եւ դրանց առանձնահատուկ խնդիրների կարգավորում:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Հայաստանում տնտեսական աճի երկարաժամկետ բարձր ցուցանիշներ ապահովելու գրավականներից է օտարերկրյա ներդրումների հոսքի բարձր մակարդակը:

Մեր նպատակն է օտարերկրյա ներդրումների՝ ներկայիս անբավարար մակարդակի կտրուկ աճի ապահովումը:

Այդ ճանապարհին պետք է առաջնահերթ լուծվեն հետեւյալ խնդիրները՝

- ներդրումների պաշտպանության եւ դրանց նկատմամբ վստահության մակարդակի բարձրացում,
- ներդրումային ծրագրերի եւ դրանց իրականացման լրացուցիչ հնարավորությունների ձեւավորում,
- Հայաստանի՝ որպես ներդրումների իրականացման ապահով եւ շահեկան վայրի ճանաչելիության բարձրացում:

Առաջիկա քայլերը՝

- հավաքագրված իրատեսական ներդրումային ծրագրերի իրականացմանը նպաստելու նպատակով կստեղծվի ներդրումային հիմնադրամ,
- գործարար հանրության հետ քննարկումների արդյունքների եւ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա կներկայացվի Հայաստանում «պետություն-մասնավոր» գործընկերության արդյունավետ մոդելը:

ԱՌԱՋԸՆԹԱՑ ԳՅՈՒՂՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտը տնտեսության կարեւորագույն ճյուղերից է, որն ապահովում է ՀՆԱ-ի եւ զբաղվածության կարեւոր մասը:

Մեր ախտորոշումը. ոլորտում առկա են՝

- ժամանակակից ֆերմերների խավի ձեւավորման խիստ ցածր տեմպեր, ձեւավորմանն աջակցող կառույցների եւ գործընթացների անբավարարություն,
- ինտենսիվ գյուղատնտեսության եւ առաջադեմ տեխնոլոգիաների ոչ բավարար տարածվածություն,
- գյուղատնտեսության մեքենայացման ցածր մակարդակ,
- սուբսիդավորման մեխանիզմների ցածր արդյունավետություն,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման ոչ արդյունավետ համակարգ,
- չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն,
- գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի ցածր մակարդակ,
- տնտեսավարողների ժամկետանց վարկեր:

Արդյունքում՝

- ցածր արտադրողական բազմաթիվ տնտեսություններ ի վիճակի չեն ապահովել բավարար կենսամակարդակ,
- առկա է գյուղատնտեսության ներուժի ցածր իրացման մակարդակ,
- առկա է պարենի ներմուծման օպտիմալից բարձր մակարդակ:

Մեր նպատակն է ապահովել աստիճանական անցում արտահանմանն ուղղված բարձր արտադրողական եւ վերամշակված սննդի շղթային՝ ինտեգրված գյուղատնտեսության եւ զբաղվածության հնարավորինս բարձր մակարդակի պայմաններում:

Ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է՝

- 2018-2020 թվականներին բարձրացնել գյուղատնտեսական հողատարածքների նպատակային օգտագործման մակարդակը,
- ստեղծել համապատասխան պայմաններ 2018-2020 թվականների ընթացքում տարեկան մինչեւ 100 հեկտար նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար,
- ստեղծել չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի տեղեկատվական շտեմարան, իրականացնել մասնատված հողակտորների խոշորացման միջոցառումներ,
- խրախուսել ոռոգման արդյունավետ (այդ թվում՝ կաթիլային) եղանակների ներդրումը,
- ավելացնել գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի մատչելիությունը,
- իրականացնել գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման հետեւողական ծրագիր,
- մսի իրացման գործընթացում ստեղծել պարտադիր սպանդանոցային մորթի պահանջներ՝ 2017-2018 թվականներին մինչեւ 65 տոկոս սպանդանոցային մորթի անցման նպատակով,
- ապահովել գյուղատնտեսական տեխնիկայի նորացման, սպասարկման եւ մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը,
- բարելավել գյուղացիական տնտեսությունների խորհրդատվական եւ տեղեկատվական համակարգը,
- շարունակական դարձնել գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրերի իրականացումը,
- գինեգործական որակյալ արտադրանք թողարկելու նպատակով հաստատել գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների եւ թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը, ներդնել որակի գնահատման իզոտոպային համակարգը եւ դրա վերաբերյալ մակնշման պահանջը:

Գերկարեւորություն ենք տալու սննդամթերքի անվտանգության հարցերին: Վերացնելու ենք վերահսկողական մեխանիզմների թերությունները եւ բարձրացնելու ենք արդյունավետությունը, որպեսզի խանութներում վաճառվող սննդի որակը անհանգստության պատճառ չհանդիսանա: Միաժամանակ ձգտելու ենք մեր երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ որպես ռազմավարական նշանակության նպատակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

Ապագայի նկատմամբ վստահություն ունեցող երիտասարդներն են ստեղծելու ամուր եւ առողջ ընտանիք, անվտանգ եւ առաջ ընթացող երկիր: Մենք պետք է ստեղծենք այնպիսի միջավայր, որտեղ հասարակության ամենամեծ ներուժ ունեցողները՝ մեր երիտասարդները, կարողանան լիարժեք ինքնադրսեւորվել, լինեն երջանիկ եւ իրենց քայլերում միշտ լինեն իրենց խղճին համահունչ: Այդ իսկ պատճառով կրթական միջոցառումների միջոցով պետք է ապահովել մեր երիտասարդ սերնդի հայկական ավանդականությունը եւ միաժամանակ «գլոբալ քաղաքացի» լինելու կարողությունը: Պետք է հետեւողականորեն իրականացնել նաեւ երիտասարդության զբաղվածության ապահովման միջոցառումներ եւ սոցիալապես անապահով երիտասարդ ընտանիքների համար հատուկ աջակցության ծրագրեր:

Երիտասարդների կրթության որակի եւ մատչելիության խնդիրները շարունակելու ենք համարել առաջնահերթ: Ուսման մեջ առաջադիմություն ցուցաբերող եւ ընդունակ երիտասարդը, անկախ իր սոցիալական վիճակից, մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն է ունենալու: Շարունակելու ենք երիտասարդների գիտակրթական եւ ստեղծագործական հնարավորությունների առավելագույնս արդյունավետ դրսեւորմանն աջակցելուն միտված պետական երիտասարդական քաղաքականությունը:

Երիտասարդների զբաղվածության խնդիրը շարունակելու ենք դասել այնպիսի առաջնահերթությունների շարքում, որոնք լուծվելու են նոր աշխատատեղերի ստեղծման, երիտասարդների ձեռներեցության խթանման եւ աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման ճանապարհով:

Ընդլայնելու ենք երիտասարդների բնակարանային ապահովման ծրագրերի ծավալները:

Զբաղվելու ենք առողջ ապրելակերպի մշտական քարոզչությամբ: Ֆիզկուլտուրայի, սպորտի, բնության մեջ շատ ժամանակ անցկացնելու, համակարգիչներից ու էլեկտրոնային սարքերից հեռու ժամանցի կարեւորությունն ենք ընդգծելու նաեւ պետական մակարդակով:

Սպորտի բնագավառում մեր քաղաքականության հիմնական ուղղվածությունը շարունակելու է մնալ սպորտային խմբակներում եւ մարզադպրոցներում ընդգրկվածության ընդլայնումը՝ դրանք հասանելի ու մատչելի դարձնելու միջոցով: Ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասսայականացումն ապահովելու նպատակով շարունակվելու է կիրառվել ֆինանսավորման նոր մոդել, որի հիմքում դրվելու է պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության սկզբունքը:

lovearmenia.am

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Տեսնում եմ, որ ճիշտ ուղիով ենք ընթանում, պարզապես ինձ թվում է՝ փոփոխությունների տեմպը պետք է արագացնել»

◀ 1

ամենայն պատասխանատվությամբ, պաշտոնի անձնագրին համապատասխան աշխատանքն ընդունել որպես անքննելի պարտականություն: Այս դեպքում եւս ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ եմ վերաբերվում կուսակցության որոշմանը:

– ՀՀ սահմանադրության 94-րդ հոդվածը փաստորեն ազդարարում է. «Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքով»:

Դա նշանակում է, որ Դուք, ընտրվելու դեպքում, թեեւ առաջադրվել ու քվեարկվել եք թիվ 12 ընտրական տարածքում, ներկայացնելու եք Հայաստանի Հանրապետության ամբողջ ժողովրդին:

Ելնելով դրանից՝ կուզենայինք իմանալ՝ որո՞նք են, ըստ Ձեզ, մեր հանրապետության առջեւ ծառացած հիմնախնդիրները (2-3 հիմնախնդիր) եւ ինչպե՞ս եք պատկերացնում դրանց լուծումը:

– Մինչ բուն հարցի պատասխանին անցնելը նշեմ, որ մանրակրկիտ ուսումնասիրել եմ նոր սահմանադրությունը, պատկերացնում եմ կառավարման նոր ստեղծվող համակարգը, գիտակցում Աժ պատգամավորի առաքելությունը:

Բնականաբար, մեկ հարցազրույցի ընթացքում հնարավոր չէ երկրի հիմնախնդիրների մասին ամբողջական խոսք ասել, բայց մի բան ակնհայտ է. աշխարհի ժողովուրդների մեջ մեր ուրույն տեղն ունենալու համար դատապարտված ենք ուժեղ պետություն ունենալ, հզորացնել մեր պետականությունը: Իմ կարծիքով՝ մեր ամենաառաջին խնդիրը երկրի ֆիզիկական ծավալների մեծացումն է՝ բոլոր առումներով՝ դեմոգրաֆիական, տնտեսական եւ այլն, եւ մեր բոլոր քայլերը միտված պետք է լինեն դրա իրականացմանը: Հիմնականում խոսելով հայերի մասին՝ երբեմն մոռանում ենք մեր երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների մասին. միգուցե մեզանում այդ հարցն այնքան ակտուալ չէ, որքան բազմազգ պետություններում, բայց ազգաբնակչության ավելացում ասելով՝ ի նկատի ունեմ առհասարակ հայաստանցու թվաքանակի ավելացում: Քանակի ավելացմանը զուգահեռ, բնականաբար, որակական հատկանիշները պետք է բարձրացվեն, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելանա, տնտեսության հատկապես առաջատար ճյուղերը զարգանան:

Մի խոսքով՝ հիմնական նպատակը, կարծում եմ, պետք է լինի տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացումը:

Երկրորդ հիմնախնդիրը, որ անմիջականորեն շաղկապված է առաջինի հետ, ֆիզիկական անվտանգության ապահովումն է՝ նախեւառաջ Ղարաբաղյան հարցի լուծումը, շրջափակման հետեւանքով առաջացած դժվարությունների հաղթահարումը: Խաղաղության հասնելու ճանապարհին պետք է ուժեղ լինենք, միջակությունն այստեղ թույլատրելի չէ:

– Հետաքրքիր է, ընտրվելու դեպքում ո՞ր հարցով առաջին հերթին հանդես կգաք օրենսդրական նախաձեռնությամբ. չէ՞ որ պատգամավորն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, եւ դա բավական լուրջ լիազորություն է:

– Չեմ կարծում՝ թեկնածուն առաջադրվելիս պետք է նախապես որոշի իր առաջին քայլը, այն էլ՝ օրենսդրության ոլորտում, որովհետեւ մինչ իրավիճակը խորապես չուսումնասիրես, տեղյակ չլինես ընդհանուր մոտեցումներին, չես կարող ճիշտ քայլեր ձեռնարկել: Բոլոր հարցերում իմ մոտեցումը հետեւյալն է. որոշում ընդունելիս, հայտարարություն տարածելիս մանրամասն տեղյակ լինել դրա էությանը: Գուցե այսօր տեղական մակարդակով հարցն ու նրա լուծումն այլ երանգ ունեն, իսկ արդեն հանրապետական մակարդակով՝ բոլորովին այլ: Խնդիրների առաջադրման սկզբունքը կարող եմ ասել. առկա հիմնախնդիրների համար միանշանակ լուծումներ կան, փոփոխությունների անհրաժեշտություն կա:

Մեր իշխանության, նաեւ Հայաստանի հանրապետական կուսակցության նոր մոտեցումն էլ այս սկզբունքին համապատասխան են, այն է՝ կտրուկ փոփոխություններ պետք է իրականացվեն թե՛ տնտեսական քաղաքականության, թե՛ կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Անհամեստություն չթվա, բայց տեղական ինքնակառավարման համակարգում հատկապես վերջին տարիներին աշխատանքային հարուստ փորձս օրենսդրական համակարգում աշխատելու վստահություն է ներշնչում: Գիտե՞ք ինչ, քննադատելը հեշտ է, բայց, իմ կարծիքով, մեր պետության հզորացման ճանապարհին առկա բոլոր թերությունները միգուցե անհրաժեշտ կամ անխուսափելի էին: Տեսնում եմ, որ ճիշտ ուղիով ենք ընթանում, պարզապես ինձ թվում է՝ փոփոխությունների տեմպը պետք է արագացնել: Միգուցե եթե այլ տարածաշրջանում գտնվեինք, եւ մեզ շրջապատեին քաղաքակիրթ երկրներ, շտապելու կարիք չլիներ, բայց մեզ բաժին հասած ճակատագիրը ստիպում է հասկանալ, որ մենք երկար սպասելու ժամանակ չունենք:

– Դժբախտաբար, անկախության տարիներին Սյունիքից չունեցանք շատ թե քիչ երեւելի պատգամավոր: Դուք համաձա՞յն եք մեր այդ դիտարկմանը, եւ ինչպիսի՞ն է լավ, հաջողված պատգամավորի Ձեր պատկերացրած տեսակը:

– Գուցե այդ տարիներին, երբ ժողովուրդը պատգամավոր էր ընտրում, նրա՝ պատգամավորի տեսակի հանդեպ ունեցած պատկերացումը, մոտեցումն այլ էր: Հասարակությունը զարգանում է, փոխվում են պահանջները, բնական է, որ իշխանավորի տեսակի հանդեպ մոտեցումը նույնպես փոխվում է: Ներկա իրավիճակը գնահատելով եւ պահանջները հաշվի առնելով՝ կասեմ, որ պատգամավորը պետք է առնվազն իր ընտրատարածքի մասին, ի տարբերություն տեղի բնակիչների, 10-15 տարի առաջ պատկերացնի հասարակական, տնտեսական համակարգի տրանսֆորմացիան, նրա իմպուլսը լավ հասկանա, եւ դրանից բխեցնի իր գործունեությունը:

– Սյունիքի մարզին առնչվող հատկապես ո՞ր հարցերը նախեւառաջ կլինեն Ձեր ուշադրության կենտրոնում եւ կարտացոլվեն Ձեր օրենսդրական նախաձեռնություններում, հարցապնդումներում, պետական բյուջեի քննարկումներում:

– Նախեւառաջ պատգամավորը պետք է սերտ համագործակցություն, մշտական կապ ունենա տարածքային եւ տեղական իշխանությունների հետ՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: Ամենամեծ սխալն առաջանում է, երբ նրանց միջեւ տարանջատում է լինում. չէ՞ որ ճշմարտությունը քննարկումներից է ծնվում: Թիվ 12 ընտրատարածքն ընդգրկում է ոչ միայն Սյունիքի, այլեւ Վայոց ձորի մարզը, եւ, բնականաբար, պատգամավորն իր տարածքում գործող բոլոր քաղաքական գործիչների, կազմակերպությունների հետ պետք է համագործակցի, քննարկի խնդիրների առաջնահերթությունն ու դրանց լուծման ուղիները: Հայաստանի Հանրապետությունն այնքան փոքր է, որ երկրի ընդհանուր զարգացմամբ միայն կարող է առանձին տարածաշրջանի զարգացում լինել: Չեմ կարծում, որ պատգամավորն իր ընտրողին հաճոյանալու համար կանգնի եւ միայն իր տարածաշրջանին վերաբերող հարց բարձրացնի, թեեւ նման մոտեցումն էլ երբեմն չպետք է բացառել: Իսկ Մեղրու զարգացումը չեմ պատկերացնում առանց մարզկենտրոն Կապանի եւ մարզի տարածաշրջանների համաչափ զարգացման:

Սյունիքի մարզի, հատկապես Մեղրու եւ Կապանի տարածաշրջանների համար կարելի է մեկ ընդհանուր խնդիր առանձնացնել: Չնայած այստեղ հանքարդյունաբերությունը զարգացած է, բայց իր դրական կողմերով հանդերձ, նաեւ բացասական ազդեցություն է թողնում թե՛ ազգաբնակչության, թե՛ շրջակա միջավայրի վրա: Այս ճանապարհին դրականն ավելացնելու համար, իմ համոզմամբ, պետք է ստեղծել օժանդակ կառույցներ, որպեսզի հանքարդյունաբերությունն ավելի շատ ծառայեցվի տարածքային հարցերի լուծմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Հաջորդ կարեւոր խնդիրը, ինչի մասին բազմիցս ասել եմ, հարեւան Իրանի Իսլամական Հանրապետության հետ առավել սերտ համագործակցություն հաստատելն է, ինչի ուղղությամբ արդեն բավականաչափ աշխատանքներ են իրականացվում: Կրկնում եմ՝ դա մեծ ներուժ պարունակող ուղղություն է հատկապես տնտեսության ոլորտում:

– Ընտրվելու դեպքում, բնականաբար, կընդգրկվեք ՀՀԿ խմբակցության մեջ: Կյանքը ցույց է տալիս, որ քիչ դեպքերում է պատգամավորը մինչեւ վերջ պնդում իր կարծիքը՝ խմբակցության կարծիքից տարբերվող:

Դուք կհամարձակվե՞ք, հարկ եղած դեպքում, չհամաձայնել խմբակցության դիրքորոշման հետ եւ մինչեւ վերջ պնդել, հիմնավորել Ձեր տեսակետը, եթե դրա կարիքը լինի:

– Չեմ կարծում, որ արդյունավետ ճանապարհ է խմբակցության կարծիքին հակառակվելը: Եթե պատգամավորն իր խմբակցությունում չի կարողանում սեփական տեսակետը հիմնավորել եւ պնդել, ուրեմն դա արդեն մտածելու տեղիք պիտի տա: Հարցին այդ կողմից պետք է նայել, իսկ մյուս կողմից, եթե նա իր ընկերներին չի կարողանում համոզել իր ճշմարտացիության մեջ, ուրեմն նրա տեսակետը սխալ է, կամ էլ ինքն է սխալ խմբակցություն ընտրել: Իհարկե, երբեմն մեր պաշտոնյաներից լսում ենք այն արդարացումը, թե իբր իրենք ուզում են այսինչ դրական, օգտակար քայլը կատարել, բայց նրանց չեն թողնում: Հավատացնում եմ՝ իմ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում առաջընթաց ապահովող լավ գործ անելու ճանապարհին անհաղթահարելի խոչընդոտ չեմ ունեցել, որովհետեւ կարողացել եմ հիմնավորել եւ պաշտպանել տեսակետս: Գուցե ովքեր բողոքում են, նրանց ցանկությունները, մոտեցումները հիմնավո՞ր չեն: Բոլորիս նպատակը մեկն է՝ մեր քայլերով օգտակար

▶ 4

Մեղրի, Սբ Հովհաննես եկեղեցի (Անապաստանաց վանք)

Հարցազրույց օրվա թեմայով

ՄԽԻԹԱՐ ՋԱՔԱՐՅԱՆ. «Տեսնում եմ, որ ճիշտ ուղիով ենք ընթանում, պարզապես ինձ թվում է՝ փոփոխությունների տեմպը պետք է արագացնել»

◀ 3

լինել երկրի զարգացմանը, եւ այդ ճանապարհին բնավ հարկավոր չէ ներքին թշնամիներ, արհեստական խոչընդոտներ փնտրել, պարզապես առաջադրված հարցերի հիմնավորվածության եւ հետեւողականության խնդիր է:

– Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները:

Ապրիլի 2-ի ընտրությանը մասնակցելու հայտ են ներկայացրել 9 կուսակցություն եւ կուսակցությունների դաշինք:

Դուք, բնականաբար, ընտրողներին հորդորում եք քվեարկել ՀՀԿ-ի օգտին: Ինչո՞ւ: Ինչո՞վ է այդ դեպքում ՀՀԿ-ն տարբերվում մյուս կուսակցություններից կամ կուսակցությունների դաշինքից:

– Ամենամեծ առավելությունը, որ մանավանդ վերջերս նկատելի է, պաշտոնյաների շրջանում ընկալման մեծ փոփոխությունն է, այն է՝ պաշտոնը, իշխանության ղեկը վայելքից վեր են ածվում ծանր պարտականության եւ պատասխանատվության: Եվ այդ պատասխանատվության բեռն այս ծանր ժամանակներում, երբ խնդիրները բազմաբնույթ են, ստանձնել են Հայաստանի հանրապետական կուսակցությունը, ինչպես նաեւ այլ համագործակցող կուսակցություններ: Նորից եմ ասում՝ քննադատելը, փնովելը շատ հեշտ է, բայց իմ հավատամքից մեկն էլ սա է՝ ավելի լավ է մեկ մոմ վառել, քան հավերժ բողոքել խավարից: Հայաստանի հանրապետական կուսակցությունը կարողացավ մեր երկիրը ղեկավարել բավականին բարդ ու ծանր իրավիճակում: Եվ եթե այսօր բոլորն անխտիր ասում են, որ կարելի է այսպես անել, այնպես անել, միգուցե պետք է գնահատել այս ելման վիճակը, որ բարենպաստ է, երբ բոլորը ստեղծված իրավիճակից դուրս գալու որեւէ ելք են տեսնում: Իսկ միգուցե այս վիճակին հասնելու համար պետք է անցնեինք դժվարությունների բոլոր փուլերով: Հաստատ համոզմունք ունեմ, որ արդյունավետ առաջընթաց կարող է ապահովել միայն այն ուժը, որ ստեղծել է այդ ելման դրությունը, իսկ այդ ուժը Հայաստանի հանրապետական կուսակցությունն է:

– Հատկապես ո՞ր ուժը կամ ո՞ր թեկնածուն կարող է լինել Ձեր մրցակիցը Սյունիքի մարզում եւ Մեղրու տարածաշրջանում:

– Բոլոր ուժերին ու թեկնածուներին էլ մրցակից եմ համարում: Մենք ունենք ճանապարհ անցած, կայացած քաղաքական ուժեր, ծայրահեղ ընդդիմադիրներ, ինչպես նաեւ այս վիճակի թերությունների հիմքը դրած ուժեր, որոնք իրենց սխալներն ուղղելու համար են ուզում իշխանության գալ: Եթե նրանցից յուրաքանչյուրն անգամ 5-7 տոկոս ձայն հավաքի, ուրեմն մեր ազգաբնակչության այդ հատվածը նրանց հանդեպ համակրանք ունի, իսկ մենք պարտավոր ենք դա հաշվի առնել:

– Բայց այս ընտրությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կուսակցության թեկնածուները ներսում նույնպես պետք է պայքարեն միմյանց դեմ:

– Այս դեպքում տեղային գործոնը նույնպես մեծ դեր է խաղալու, եւ դրա համար մեր հասարակությունն օրվա թերությունները նշելիս, քննադատելիս պետք է ինքն իրեն հարց տա՝ արդյո՞ք պատրաստ է ծագումով ոչ իր քաղաքի, շրջանի թեկնածուին ըստ արժանվույն գնահատել, ընտրություն կատարելիս վեր կանգնել տեղային ու անձնական զգացումներից: Բայց պետք է հարմարվենք ստեղծված իրավիճակին, խաղի կանոններն արդեն սահմանված են:

– Չե՞ք կարծում, որ ՀՀԿ համապետական ցուցակում Սերժ Սարգսյանի բացակայությունը նվազեցնում է ՀՀԿ հաջողությունների հավանականությունն ապրիլի 2-ի ընտրություններում:

– Չեմ կարող այդ հարցին միանշանակ պատասխան տալ, գուցե իրավասու էլ չեմ, բայց եթե այդպես են որոշել, ուրեմն հաստատ տրամաբանություն կա այդ քայլի մեջ: Իմ կարծիքով՝ եթե ՀՀԿ-ն կայացած կուսակցություն է՝ ուժեղ գաղափարախոսությամբ, ծրագրով, ամենեւին էլ պարտադիր չէ, որ երկրի նախագահը լինի ցուցակի առաջին տեղում: Արդեն տեւական ժամանակ է՝ մեր իշխանությունը՝ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, պատրաստվում է կառավարման խորհրդարանական համակարգ ստեղծելուն, եւ եվրոպական չափանիշներով ընտրություններ անցկացնելուն: Անընդհատ շեշտվում է, որ ընտրությունները պետք է անթերի անցնեն: Եթե հանրապետության նախագահն իր ազդեցությունը, անցած ճանապարհը, դիրքն ու հեղինակությունը չի ցանկացել ծառայեցնել իր իսկ գլխավորած կուսակցությանը, ապա նշանակում է՝ դրանով փորձել է պետական միջամտությունը նվազագույնի հասցնել, ինչը կստիպի ընտրողին ավելի անկողմնակալ լինել: Իմ կարծիքով՝ մեր նախագահն այս քայլով ցույց է տվել, որ պետության միջազգային վարկանիշն ավելի կարեւոր է:

– Որքանո՞վ եք մրցունակ համարում թիվ 12 ընտրատարածքի ՀՀԿ տարածքային ցուցակը, որում ընդգրկված է ութ հոգի: Դուք ձեռնպահ կմնա՞ք նրանց դեմ պայքարելուց: Հետո ի՞նչ, որ Ձեր կուսակիցներն են. չէ՞ որ Ձեր անձնական վարկանիշն է կշեռքի նժարին դրված:

– Ձեր հարցի պատասխանն ապրիլի 2-ին կտա ընտրողը: Ես միայն կարող եմ ասել, որ ՀՀԿ տարածքային ցուցակում ընդգրկվել են արժանավոր թեկնածուներ: Իսկ եթե մարզի մասշտաբով հարցին նայենք, ապա պետք է նշեմ, որ չնայած մարզպետ Վահե Հակոբյանը ծնունդով մեր մարզից չէ, բայց այստեղ աշխատելու կարճ ժամանակահատվածում ե՛ւ հանքարդյունաբերության ոլորտում, ե՛ւ արդեն պետական կառավարման համակարգում իր գործունեության դրական դրսեւորումները, պետական կառավարչի ընդունակություններն ի ցույց է դրել: Կարծում եմ՝ ընտրողների այն խավը, որ անմիջական առնչություն է ունեցել Վահե Հակոբյանի գործունեության հետ, կքվեարկի նրա օգտին:

– Մեղրիում, կարծեք, ոչ բոլորն են ոգեւորված Ձեր՝ Աժ պատգամավոր ընտրվելու մտադրությամբ: Մարդիկ ափսոսում են, չեն ուզում, որ Դուք թողնեք համայնքապետարանը եւ տեղափոխվեք Ազգային ժողով:

– Իմ որդեգրած սկզբունքից, վստահ եմ, երբեւէ չեմ շեղվի: Կարող եմ ասել. ոչ մի անգամ ընտրությունից հետո մարդիկ չեն փոշմանի ինձ տված քվեի համար: Որպես համայնքի ղեկավար՝ կասեմ, որ այս ընտրությունն ինձ համար նախեւառաջ Մեղրու տարածաշրջանում իմ կատարած աշխատանքի գնահատականը, ինչ-որ առումով ուղեցույցը կլինի՝ արդյո՞ք ճիշտ ճանապարհով ենք ընթանում: Բնական է՝ ինձ վստահության քվե տվող մարդը նախեւառաջ համայնքի ղեկավար Մխիթար Ջաքարյանին է ընտրելու: Սա նոր առիթ է, վստահության չափորոշում: Անկախ ընտրությունների արդյունքից՝ ոչ մի անգամ հուսախաբ չեմ անի իմ ընտրողին: Վստահեցնում եմ՝ չի կատարվի այնպիսի քայլ, որ ի վնաս մեր տարածաշրջանի լինի:

– Դուք քարոզարշավի ժամանակ ներկայանալո՞ւ եք Եղեգնաձորի, Վայքի, Սիսիանի, Գորիսի, Կապանի ու Քաջարանի ընտրողներին, թե՞ բավարարվելու եք միայն Մեղրու տարածաշրջանով:

– Հիմնականում քարոզարշավի ընթացքում կներկայանամ Մեղրու տարածաշրջանում, ինչն առավել տրամաբանական եմ համարում:

– Մեղրու տարածաշրջանում իրականացվող պետական քաղաքականության դրսեւորումներից է նաեւ Իրանի հետ սահմանակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծումը, ինչի առթիվ վերջերս ՀՀ կառավարությունը համագործակցության հրավիրեց Սյունիքի մարզում առկա կազմակերպություններին: Ձեր տարածաշրջանում կա՞ն նման կազմակերպություններ:

– Ազատ տնտեսական գոտի ստեղծելու ծրագիրը, որ միջպետական մակարդակի գլոբալ ծրագիր է, ուրախացնող, հուսադրող է եւ մեր հետագա լավատեսության հիմքը: Այդ հարցով զբաղվում է ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունը, եւ մանրամասն տեղեկություններ ինձ հայտնի չեն: Միայն տեղյակ եմ, որ ազատ տնտեսական գոտու ստեղծման ուղղությամբ ինտենսիվ աշխատանքներ են տարվում: Սա բավականին հավակնոտ ծրագիր է, եւ, իմ կարծիքով, այս պահին մեր տարածաշրջանում դժվար թե լինի մի կազմակերպություն, որ լիարժեք պատրաստ լինի դրան: Իմ խնդիրը հնարավորության սահմաններում աջակցություն ցուցաբերելն է, ազգաբնակչությանն ու ենթակառուցվածքներն այդ փոփոխությանը նախապատրաստելը:

– Մեղրու հէկի հետ կապված ծրագիրը, որ պետք է կյանքի կոչվի հայ-իրանական համագործակցության շրջանակում, կարծեք, թղթին է մնացել: 2012թ. նոյեմբերի 7-ին մեկնարկ տրվեց, բայց մինչեւ այսօր ոչ մի քայլ չի կատարվել:

– Որեւէ նոր, հավելյալ տեղեկության չեմ տիրապետում, գիտեմ այն, որ ծրագրի ուղղությամբ այս պահին քայլեր չեն ձեռնարկվում:

– Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանին էր 2016-ի տարեվերջին այցելել Հայաստան՝ գործարար աշխարհի ներկայացուցիչների մեծ բազմության ուղեկցությամբ: Մեղրու տարածաշրջանի հետ կապված որեւէ նոր պայմանավորվածություն եղա՞վ, թե՞...

– Այդ այցի ռեալ արդյունքը Մեղրու տարածաշրջանի գազիֆիկացումն էր, ինչպես նաեւ առանց վիզային ռեժիմի հաստատումը, սահմանային ընթացակարգերի պարզեցումը, որոնք, ի դեպ, բավականին լուրջ քայլեր են:

Տեղական մակարդակով նշեմ, որ Ջուլֆա քաղաքի հետ քույր քաղաքների համագործակցության նախնական պայմանավորվածություն ունենք:

– Մի քանի օր առաջ՝ փետրվարի 10-ին, վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել հերթական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել է Սյունիքի մարզից ներկայացված ներդրումային ծրագրերի փաթեթը: Որքանո՞վ է Մեղրու տարածաշրջանն ընդգրկված ծրագրերի այդ փաթեթում:

– Սյունիքի ներդրումային ծրագրի փաթեթից Մեղրու տարածաշրջանին առնչվում է սառնարանային տնտեսության հիմնումը: Հանրապետության մյուս տարածաշրջանների համեմատ Մեղրու տարածաշրջանի հանդեպ վերաբերմունքը պետք է տարբերվի: Եթե այլ տարածաշրջաններում աշխատատեղերի ստեղծման, ՀՆԱ-ն ավելացնելու համար նոր բիզնես

Մխիթար Ջաքարյան.

ծնվել է 1971թ. Ագարակ քաղաքում: 1989թ. Ագարակի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի ժողտնտեսության ինստիտուտը: Թողնելով ուսումը՝ 1993թ. կամավոր անցել է զինվորական ծառայության Կապանի մոտոհրաձգային բրիգադում: Ծառայության ընթացքում մասնակցել է մի շարք մարտական գործողությունների, ինչի համար հետագայում արժանացել է «Մարտական ծառայության համար», «Վազգեն Սարգսյան» մեդալների: Ներկայումս ՀՀ զինված ուժերի պահեստազորի լեյտենանտ է:
1995-2001թթ. աշխատել է ՀՀ պետեկամուտների կոմիտեի Սյունիքի տարածքային հարկային ծառայության օպերատիվ հետախուզական վարչությունում՝ տեսուչ, օպեր-լիազոր, 2001-2005թթ.՝ ՀՀ մաքսային ծառայության մաքսանենգության դեմ պայքարի վարչության Մեղրու մաքսակետի խմբի ղեկավար:
2007-2008թթ. եղել է «Վիլա տրանս» ՍՊԸ-ի տնօրեն:
2008թ. ընտրվել է Ագարակի քաղաքապետ, 2012թ.՝ վերընտրվել:
2016թ. սեպտեմբերի 18-ին ընտրվել է Մեղրի բազմաբնակավայր համայնքի ղեկավար:
2011թ. պաշտպանել է «Հարկային քաղաքականությունը եւ լեռնամետալուրգիայի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
2005 թվականից ՀՀԿ անդամ է: Ամուսնացած է, ունի երկու որդի, երկու դուստր:

Ինքնախոսպովանանք

Տարիների ձեռքբերումներիս ու հաջողություններիս համար պարտական եմ, նախեւառաջ, ընտանիքիս: Հորիցս՝ Սեյրան Զաքարյանից, ով շուրջ 42 տարի աշխատել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ «Բելազ»-ի վարորդ, ժառանգել եմ աշխատասիրություն եւ հայրենի եզերքին նվիրվածություն, մորիցս՝ Արմիկ Ղազարյանից, ով նույնպես աշխատել է կոմբինատում՝ ընտանեկան ջերմություն:

Կինս՝ Վարդուհին, մասնագիտությամբ հաշվապահ է, եւ այժմ ղեկավարում է մեր ընտանեկան բիզնեսը: Ավագ դուստրս՝ Շահանեն, սովորում է 12-րդ դասարանում եւ ցանկանում է դառնալ տնտեսագետ, իսկ կրտսեր զավակներս՝ 4-ամյա Ատոմն ու 2-ամյա Արսենն ու Աննան, շարունակում են ոգեշնչման աղբյուր լինել ինձ համար…

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

հիմնելու խնդիրներ կան, ապա Մեղրիում ավելի շատ եղածը պահպանելու, կարգի բերելու եւ իր նպատակին ծառայեցնելու խնդիր կա: Մեղրու տնտեսության մեջ հանքարդյունաբերությունից հետո երկրորդ ծանրակշիռ ճյուղը գյուղատնտեսությունն է: Վերջին տարիներին ոռոգման ցանցի ընդլայնման, բարեփոխման շնորհիվ ակնկալում ենք բերքի աճ: Ճիշտ է, ներկայումս բերքի իրացման հարցը լուծվում է, բայց հետագայում պետք է պատրաստ լինենք բերքի մթերմանը, եւ սառնարանային տնտեսության հիմնումը հենց այդ կոնտեքստում է:

– Մեղրու ոռոգման ջրի ինքնահոս համակարգի կառուցումը ո՞ր հանգրվանում է:

Արաքսամերձ վեց համայնքում աշնանը կատարվում էր նաեւ ոռոգման ջրի ներքին ցանցի բարելավում, ավարտվե՞ց այդ ծրագիրը:

– Չախ թեւի աշխատանքներն արդեն ավարտվել են, աջ թեւինը շուտով կսկսվեն: Բայց ինչպես բազմիցս ասել եմ, հարցի վերջնական լուծումը կլինի այն ժամանակ, երբ կկառուցվի ջրամբար:

– Մեղրու տարածաշրջանում շատ հիմնախնդիրներ կան, եւ դրանք հնարավոր չէ մեկ զրույցի ընթացքում քննարկել, մանավանդ որ մեր զրույցն Աժ ընտրությունների առիթով է: Բայց որոշ հարցեր չենք կարող շրջանցել:

Առաջինը, իհարկե, Մեղրի գետին սպառնացող հանգամանքների եւ հատկապես փոքր հէկերի մասին է: Իհարկե, լավ է, որ փոքր հէկեր են կառուցվում, տեղական ռեսուրսն օգտագործում: Բայց, մյուս կողմից, ջրի զգալի մասն արդեն խողովակաշարով է անցնում եւ բացասական հետեւանքներ ունենում շրջակա միջավայրի վրա: Ի դեպ, փորձագետների այդ տեսակետը մտահոգում է նաեւ շատ մեղրեցիների: Ձեզ չի՞ մտահոգում Մեղրի գետի վիճակը:

– Հետեւանքների վերաբերյալ գնահատականը համապատասխան մասնագետները կտան: Մեկ անգամ էլ եմ ասել՝ 1000 քառ. մետր հողատարածք ունեցողի շահը երբեք չի ստորադասվելու հէկից ստացվող միլիոններին: Եթե հէկի տիրոջը թողնենք, նա կցանկանա տարին 12 ամիս ջուրն օգտագործել, բայց համայնքը պետք է այնքան ուժեղ լինի, որ զսպի նրա ախորժակը՝ ի շահ հողօգտագործողների եւ շրջակա միջավայրի:

– Երկրորդ հարցը, այդ տեսակետից, շրջակա միջավայրն աղտոտելու ռեալ սպառնալիքն է, որ կապված է հանքարդյունաբերության զարգացման հետ:

Փետրվարի 1-ի հանրային քննարկումից հետո Մեղրիում խոսակցություններ են շրջանառվում, թե իբր Ալվանք-Շվանիձորի մերձակայքում եւս գունավոր մետաղների հանքարդյունահանում է կազմակերպվելու:

Արդյո՞ք այդ խոսակցությունը համապատասխանում է իրականությանը:

– Ես տեղյակ չեմ, ինձ չեն դիմել այդ հարցով, որքանով ես գիտեմ, այնտեղ գրանիտի հանքավայր կա: Փետրվարի 1-ին կազմակերպված հանրային լսումն Ալվանքի քարի հանքավայրի շահագործմանն էր առնչվում:

Ինչ վերաբերում է հանքարդյունաբերության հետեւանքով շրջակա միջավայրի աղտոտմանը, ապա Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնումից մինչ օրս այդ խնդիրը կա:

Բարեբախտաբար, Ագարակի կոմբինատից բացի տարածաշրջանում գործող մյուս հանքարդյունաբերական ընկերությունները չեն նախատեսում հարստացուցիչ ֆաբրիկա ունենալ:

Ցավով նշեմ, որ այսօր մեր տարածաշրջանը, հանրապետությունն առանց հանքարդյունաբերության ի վիճակի չեն գոյատեւել, եւ մեզ մնում է միայն ակնկալել, որ հանքաքարի մշակման տեխնոլոգիաների արդիականացման միջոցով ժամանակի ընթացքում դրանց վնասը նվազագույնի կհասցվի:

– Եվ քանի որ խոսեցինք հանքարդյունաբերության մասին, կուզենայինք ճշտել՝ «Լիճքվազ»-ի ոսկու հանքավայրի շահագործումն արդյո՞ք կվերսկսվի: Տարիներ առաջ այնտեղ մոտ 400 մարդ էր աշխատում, եւ անհասկանալի պատճառով փակվեց:

– Նախքան հարցին պատասխանելը մեկ ճշգրտում անեմ. ոչ թե մոտ 400, այլ 280 մարդ էր աշխատում: «Լիճքվազ-Թեյ» ոսկու հանքավայրը «Պոլիմետալ» ընկերությունն է գնել, իսկ հանքաքարը տեղում չի մշակվում: Եթե նախատեսվեր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցում, հավատացնում եմ, հաստատ թույլ չէինք տա, որովհետեւ եթե Ագարակի ՊՄԿ-ն Մեղրի գետին վնաս չի հասցնում, ապա այս դեպքում Մեղրի գետին իրական վտանգ կսպառնար: Կարծում եմ՝ ֆաբրիկայի առկայության դեպքում վնասակար ազդեցությունը չնկատելն առնվազն դեմագոգիա կլիներ:

– Տաշտունի ձեռնարկության ապագան էլ հետաքրքիր է. լավ մեկնարկ տրվեց, Լիճքում եւ Տաշտունում ոգեւորվել էին մարդիկ: Կվերականգնվե՞ն աշխատանքներն այդտեղ, թե՞...

– Իմ տեղեկություններով այնտեղ սխալ տեխնոլոգիա էր կիրառվել ի սկզբանե, դրա համար դադարեցվել է գործունեությունը: Այս պահին կոնկրետ տեղեկություն չունեմ նրանց հետագա ծրագրերից: Լիճքի հանքավայրն էլ Զանգեզուրի ՊՄԿ-ն է գնել, այդտեղ նույնպես հարստացուցիչ ֆաբրիկա չի լինի: Այն դեռեւս չի շահագործվում, բայց առաջիկայում կսկսվեն աշխատանքները, ինչի համար նախատեսվում է մինչեւ 80 աշխատատեղի բացում:

– «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում նոր ղեկավարություն է նշանակվել փետրվարի սկզբին: Ինչպե՞ս եք գնահատում այդ փոփոխությունը:

– Շատ դրական եմ գնահատում ղեկավարի փոփոխությունը: Հասցրել եմ ծանոթանալ նոր ղեկավարի՝ Անդրեյ Սինյակովի տեսակետներին, մոտեցումներին եւ ասեմ, որ հատկապես նրա կենսագրությունը բավականին տպավորիչ է եւ խոստումնալից: Սովորություն կա համայնքի ղեկավարին հարցնել կոմբինատի սոցիալ-ներդրումային քաղաքականության մասին, բայց ես ասեմ, որ ինձ համար առաջնայինն այն է, որ տնօրենը նախեւառաջ կարողանա կոմբինատի աշխատանքները ճիշտ համակարգել, զարգացնել, ինչն ինքնըստինքյան կնպաստի համայնքում սոցիալական շատ հարցերի լուծմանը:

– Մինչեւ այսօր էլ տարակուսներ կան համայնքների խոշորացման հարցի նպատակահարմարության առնչությամբ: Դուք ի սկզբանե կողմնակից եք եղել համայնքների խոշորացմանը: Հիմա այդ գործընթացի կենտրոնում եք: Եվ ի՞նչ կասեք՝ համայնքների խոշորացումը քննությո՞ւն է բռնում, թե՞ չի ստացվում:

– Հիմա, երբ արդեն անցել ենք գործնական քայլերի, առավել քան համոզված կարող եմ ասել, որ համայնքների խոշորացումը մեր երկրի տարածքային կառավարման համար հուսալի, արդարացնող եւ չափազանց կարեւոր փոփոխություն էր, որ նպաստում է համայնքի ներուժը հավասարաչափ բաշխելուն եւ ճիշտ օգտագործելուն: Ինչպես հայտնի ասացվածքն է ասում, ճտերն աշնանն են հաշվվում, բայց հավատացնում եմ, որ աշնանը պետք չէ սպասել: 2017թ. աշնանը կատարածը թվարկելու կարիք չի լինի, որովհետեւ փոփոխություններն ակնհայտ կլինեն, եւ դուք կտեսնեք: Պարզապես ծանր ժամանակ ենք գնում ընտրության, այս պահին համայնքը դեռեւս ձեւավորման փուլում է գտնվում, զարգացման ծրագիրը դեռ նոր ենք կազմել, փետրվարի 22-ին ներկայացրել ենք վարչապետին, որի նկատմամբ վստահություն է հայտնվել:

– Եթե կարելի է, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ փետրվարի 22-ի հանդիպումից որոշ մանրամասներ ներկայացրեք:

– Վարչապետ նշանակվելու առաջին իսկ օրերից Կարեն Կարապետյանը խոստացել էր, որ ՀՀ կառավարությունն առաջնային ուշադրություն կդարձնի այն համայնքներին, որտեղ հաջողություններ են գրանցվել: Եվ այդ կոնտեքստում փետրվարի 22-ին հանրապետության 12 համայնքի ղեկավար հնարավորություն ունեցավ հանդիպել վարչապետին, ներկայացնել զարգացման ծրագրերը, բարձրացնել հուզող հարցեր: Օգտագործելով պատեհ առիթը՝ ես նույնպես ներկայացրի Մեղրի համայնքի մի քանի խնդիր, որոնց լուծման տարբերակներն արդեն իսկ մարզպետի հետ քննարկվել էին, բայց այդ հանդիպման շնորհիվ այսպես ասած վերջնական տեսք ստացան: Մասնավորապես Մեղրու Փոքր թաղում գտնվող հրետանային դիվիզիոնի մասնաշենքը տրամադրվեց «Մեղրու կոմունալ ծառայություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ին, որ կծառայի որպես վարչական շենք, ավտոհավաքակայան եւ այլն: Նախադպրոցական կրթություն կազմակերպելու համար համայնքի հինգ բնակավայրում առկա շենքային բավականին հարմարավետ պայմաններով ամբուլատորիաները տրամադրվեցին համայնքին: Վաղեմի ցանկություններիցս էր նաեւ համայնքում ՊՈԱԿ-ի կարգավիճակով մարզադպրոց ունենալ, ինչի համար նույնպես առկա են շենքային պայմաններ: Այդ հարցը նույնպես խոստացան լուծել: Մի խոսքով՝ այդ հանդիպումը բավականին արդյունավետ եւ միեւնույն ժամանակ պարտավորեցնող էր:

– Պատգամավոր չընտրվելու դեպքում ինչպիսի՞ վերաբերմունք կցուցաբերեք ընտրողների, կուսակցության նախընտրական ծրագրի հանդեպ:

– Ե՛վ ընտրվելու, ե՛ւ չընտրվելու դեպքում, հավատացնում եմ, իմ գործելաոճում, մոտեցումներում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա: Մեր պետականության կայացման ընթացքի ներկա փուլի մասնակիցն եմ՝ անկախ կարգավիճակից, եւ այդպես էլ կլինեմ:

Միանշանակ վստահ եմ՝ հազարավոր ընտրողների քվեն կստանամ, ինչը լրացուցիչ խթան կլինի, վստահություն կներշնչի, որ առաջընթացի ճիշտ ուղի ենք բռնել: Թե՛ որպես համայնքի ղեկավար, թե՛ որպես պատգամավոր, եւ թե՛ որպես ՀՀ քաղաքացի, ինչու չէ՝ նաեւ զինվոր, այդ ծրագրերի իրականացման ճանապարհին մեր իրականության մեջ միշտ կունենամ իմ տեղն ու դերը:

– Հատկապես երիտասարդության հանդեպ ինչպիսի՞ քաղաքականություն պետք է վարել:

– Մեր երկրում նոր իրողություն է ձեւավորվել, մենք անընդհատ սիրում ենք խոսել ապրիլյան պատերազմում մեր նոր սերնդի ցուցաբերած խիզախության, հայրենասիրության մասին, կենացներ խմել: Բայց իմ խորին համոզմամբ՝ նախեւառաջ պետք է խոսենք նրանց հանդեպ մեր ունեցած պարտավորություններից եւ կոնկրետ քայլեր ձեռնարկենք: Մեր առաքելությունն այդ սերնդին գովելը չէ, այլ նրանց բարեկեցիկ ապագայի համար նախադրյալներ, հասարակության մեջ արժանի տեղ զբաղեցնելու հիմքեր ստեղծելը: Քսան տարի է՝ մեր հասարակությունն առողջանում է. այսօր առաջնագծում ծառայած, իր քաղաքացիական ու սահմանադրական պարտքը լավագույնս կատարած սերնդի հետ գործ ունենք, որ պաշտպանել է պետականությունը, հայրենիքը: Բնականաբար, այլ մոտեցում պետք է ցուցաբերվի, նախկինում գործող մեթոդները նրանց համար ընդունելի չեն: Մի խոսքով՝ նոր սերնդի ինքնադրսեւորման համար շատ լուրջ քայլեր պետք է ձեռնարկենք:

– Ձեր նախընտրական խոսքը՝ ուղղված ընտրողներին:

– Ինչպես արդեն նշեցի, ես թույլ չեմ տա, որ ինձ տված քվեի համար մարդիկ ափսոսանք ապրեն, հավատացնում եմ՝ իմ գիտելիքները, փորձը, անցած ճանապարհը բավարար են Աժ պատգամավորի մանդատն արժանապատվորեն կրելու, մարդկանց սպասելիքներն արդարացնելու համար:

Հարցազրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի պաշտոնավարման 100 օրը

Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանն առաջին համայնքներից էր, որ բռնեց խոշորացման ուղին: Բազմիցս եմ շեշտել, այժմ նույնպես հավաստեմ, որ լիովին արդյունավետ եմ համարում: Այն ոչ միայն ժամանակի պահանջն էր, հրամայականը, այլեւ ՏԻՄ կարողությունների արդյունավետության բարձրացման դրական կողմերից մեկը:

2016թ. սեպտեմբերի 18-ի ընտրությամբ ձեւավորված խոշորացված համայնքն իր մեջ ընդգրկում է ութ գյուղական եւ երկու քաղաքային համայնք: Ձեւով եւ բովանդակությամբ նախադեպը չունեցող այս կառավարման համակարգի կազմավորումը բարդ էր՝ համակարգային անցմանը բնորոշ դժվարություններով:

Աշխատանքները համակարգված փուլ մտան կառուցվածքային փոփոխություններից, աշխատակազմի ձեւավորումից հետո: Ի դեպ, համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկվեցին ինչպես նախկին փորձառու ՏԻՄ մասնագետներ, այնպես էլ երիտասարդ, կարող ուժեր:

Գյուղական բոլոր բնակավայրեր այցելություններով սկսվեց մեր աշխատանքը. դրա հիմնական նպատակն էր ավելի մոտիկից ծանոթանալ հիմնախնդիրներին, լսել առաջարկություններ, ներկայացնել նախատեսվող աշխատանքները եւ ապահովել հանրության ներգրավվածությունը համայնքի զարգացմանը միտված ծրագրերի խրախուսմանը: Մեր առաջնահերթ խնդիրը եղավ համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակումը, իրատեսական ծրագրերի համար ներդրողներ գտնելը: Ինչպես գիտեք, հանրապետությունում նախատեսվում է իրականացնել տարբեր գլոբալ ծրագրեր, որոնք ընդգրկում են նաեւ մեր տարածաշրջանը: Բայց համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմելիս նկատի ենք ունեցել մեր իրական հնարավորությունները՝ առանց հաշվի առնելու գլոբալ ծրագրերի իրականացման հետեւանքով սպասվելիք արդյունքները:

> *Աշխատանքի արդյունավետության բարձրացման եւ օպտիմալացման ծրագրերի շրջանակներում կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին:*

Մի քանի համայնքային կազմակերպությունների միավորման արդյունքում ստեղծվեցին «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը, Ագարակի եւ Մեղրու կոմունալ տնտեսության հիմքի վրա ստեղծվեց «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ը, որն արդեն ծառայություն է մատուցում ոչ միայն քաղաքային, այլեւ գյուղական բնակավայրերին:

Լեհվազ եւ Կարճեւան նախկին գյուղական համայնքների մանկապարտեզները դարձան Մեղրու եւ Ագարակի մանկապարտեզի մասնաճյուղեր: Իմ ծրագրային առաջնային դրույթներից էր նաեւ մյուս գյուղերում մանկապարտեզի մասնաճյուղեր ունենալը:

Արդյունավետ պետք է համարել ճանաչված «Պոլիմետալ» ընկերության հետ համագործակցությունը՝ Լիճքվազ-Թեյի հանքավայրի փակ շահագործում իրականացնելու նպատակով: Այդ համագործակցության շրջանակում համայնքին նվիրվեց աղբատար ավտոմեքենա, իսկ վերջերս կնքած սոցիալ-տնտեսական հուշագրի շրջանակում Վարդանիձոր գյուղում կկառուցվի մանկապարտեզ:

Նշեմ, որ բոլոր համայնքներում կատարվել է գույքագրում, որը հնարավորություն է տալիս արդյունավետ տնօրինել գույքը եւ որն էլ բերում է համայնքի եկամուտների ավելացմանը: Գործող օրենսդրությանն են համապատասխանեցվում հողամասերի օգտագործման նախկինում կնքված պայմանագրերը:

> *Իմ որդեգրած քաղաքականության մեջ կարեւորություն եմ տվել եւ տալիս զոհված ազատամարտիկների եւ բազմազավակ ընտանիքներին սատարելուն:*

Գյուղերում մշակութային կյանքն աշխուժացնելու նպատակով կազմակերպվեցին Ամանորի հետաքրքիր եւ անակնկալներով լի միջոցառումներ:

Համայնքի հինգ գյուղում (Տաշտուն, Ալվանք, Շվանիձոր, Լեհվազ, Կարճեւան) նորոգվեց լուսավորության ցանցը:

Կյանքի է կոչվում մեր ծրագրային դրույթներից եւս երկուսը: Բնակավայրեր կատարած իմ նախընտրական եւ հետընտրական այցերի ժամանակ բնակիչներին խոստացել եմ անվճար տրամադրել շինանյութ (ցեմենտ եւ ավազ). օրենքով սահմանված գնման գործընթացը շուտով կավարտվի: Մարտի 1-ից գործում է ներհամայնքային տրանսպորտային երթուղին:

Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագրերը կյանքի կոչելու համար կարեւոր են իրատեսական բյուջեի առկայությունը, սեփական եկամուտների ճիշտ հավաքումն ու ծախսերի նպատակային կազմակերպումը: Համայնքի 2017թ. բյուջեն իր վերջնական տեսքն ապահովեց հանրային քննարկումների արդյունքում: Եթե նախկինում տարածաշրջանի համայնքների ընդհանուր բյուջեն կազմում էր մոտ 430 մլն դրամ, որից դոտացիա՝ 211 մլն դրամ, ապա այսօր դոտացիան ավելացել է 18 մլն դրամով, իսկ սեփական եկամուտները՝ կրկնակի, արդյունքում Մեղրի խոշորացված համայնքի տարեկան բյուջեն կազմում է 670 մլն դրամ:

Ժառանգություն էինք ստացել ավելի քան 30 մլն դրամ աշխատավարձի եւ 10 մլն դրամի այլ պարտքեր: Մեզ հաջողվեց կարճ ժամանակահատվածում՝ լարված աշխատանքի արդյունքում, այն մարել: Ի դեպ, խոշորացման շնորհիվ համայնքապետարանի աշխատողների աշխատավարձի խնայողությունն ավելի քան 68 մլն դրամ է կազմել (տարեկան):

Ծրագրերը շատ են. մենք պատասխանատվություն ենք զգում համայնքի բնակիչների առջեւ՝ մեր աշխատանքով ապացուցելու խոշորացված համայնքի առավելությունները, որը ոչ թե նշմարվում, այլ ակնհայտ է դառնում: Մեր գործելաոճը բաց է, թափանցիկ եւ հրապարակային: Յուրաքանչյուր քաղաքացի կարող է իրազեկվել մեր կատարած աշխատանքների, ծրագրերի, ընդունած որոշումների մասին, հայտնել տեսակետներ, առաջարկություններ եւ դիտողություններ:

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԳՅՈՒՂԵՐԸ

Կուրիս

Շվանիձոր

Կարճեւան

Ալվանք

Վարդանիձոր


Վահրավար


Լեհվազ


Նռնաձոր

Տաշտուն

Գուդեմնիս

Լիճք

Ագարակ

Մեղրի համայնքի 2017-21թթ. զարգացման հնգամյա ծրագիր /համառոտ/

Մեղրի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն այն կարեւորագույն փաստաթուղթն է, որով սահմանվում են համայնքի միջնաժամկետ զարգացման նպատակային ուղղությունները համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների վերհանման, մարդկային, նյութական եւ ֆինանսական ռեսուրսների գնահատման, ուժեղ եւ թույլ կողմերի բացահայտման ճանապարհով:

Հետամուտ լինելով Մեղրի համայնքի զարգացման տեսլականին՝ նախատեսվում է առաջիկա հինգ տարվա ընթացքում ունենալ՝

- համայնքին տնտեսական բարեկեցություն բերող, բնապահպանական նվազ ազդեցությամբ եւ արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերություն (պղինձ, մոլիբդեն, ոսկի, գրանոդիորիտ),
- մրցունակ գյուղատնտեսական արտադրանք եւ արտադրության զարգացման որոշակի ուղիներ (նուռ, արքայանարինջ, թուզ, ձիթապտուղ),
- զբոսաշրջության զարգացումը խթանող տնտեսական, կառուցվածքային բարենպաստ պայմաններ (հյուրատների քանակի ավելացում, խաղատների կառուցում, պատմամշակութային կոթողների բարեկարգում),
- գործարարության եւ ներդրումների համար բարենպաստ միջավայր,
- համալրված եւ բարեկարգ նախադպրոցական ուսումնական հաստատություններ (մասնավորապես Վարդանիձոր, Ալվանք, Շվանիձոր, Լիճք, Նռնաձոր գյուղերում Մեղրու եւ Ագարակի մանկապարտեզների մասնաճյուղերի հիմնում, Մեղրու եւ Կարճեւանի մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում),
- մարզական եւ մշակութային ակտիվ կյանք, ֆիզիկական դաստիարակության կազմակերպման բարձր մակարդակ (նախատեսվում է նոր մարզադահլիճի կառուցում Ագարակ քաղաքում գտնվող նախկին կաթսայատան շենքի հիմքի վրա, Մեղրիում եւ Լեհվազում գործող մշակութային տների, Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղի վերանորոգում, երկրագիտական թանգարանի հիմնում Մեղրի քաղաքում),
- բնակելի մակերեսի ընդլայնում Մեղրու նախկին պոլիկլինիկայի եւ Ագարակի նախկին հիվանդանոցի շենքերի հաշվին,
- կանաչապատ տարածքների աճ (նոր զբոսայգիների կառուցում, այգեգործության խթանում),
- աղբահանության համակարգի բարելավում եւ սանմաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում համայնքի բոլոր բնակավայրերում,
- միջբնակավայրային տրանսպորտային երթուղիներ (ներառյալ բոլոր բնակավայրերը),
- բարեկարգ եւ ասֆալտապատ ճանապարհներ,
- էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքներ,
- գյուղմթերքի իրացմանը նպաստող բեռնափոխադրման ծառայություն եւ գյուղատնտեսական շուկա:

Փաստաթղթում ընդգրկված ծրագրերը նախատեսվում են իրականացնել համայնքային եւ պետական բյուջեի միջոցներով, տեղական եւ միջազգային դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների հատկացրած դրամաշնորհներով եւ ֆինանսավորման այլ աղբյուրներով: Դրանց մի մասի իրականացման համար հայտ է ներկայացվել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին եւ «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրին: Ընդգրկվել են նաեւ ծրագրեր, որոնց իրականացման համար համայնքը փնտրում է ֆինանսավորման աղբյուրներ:

Մեղրի համայնքի եւ տեղական դոնոր կազմակերպությունների համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրերից են՝ Միջբնակավայրային տրանսպորտային երթուղիների ստեղծում (ներառյալ բոլոր բնակավայրերը՝ Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն) եւ համապատասխան ենթակառուցվածքների՝ կահավորված կանգառների, կայանատեղի կառուցում (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, 100 մլն դրամ), Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լիճք գյուղերում Մեղրու եւ Ագարակի մանկապարտեզների մասնաճյուղերի հիմնում (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, 100 մլն դրամ), ճանապարհային սպասարկման ծառայության ձեւավորում եւ համապատասխան տեխնիկայի ձեռքբերում (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, 150 մլն դրամ), գյուղմթերքի տեղափոխման կազմակերպում եւ բեռնատար մեքենայի ձեռքբերում (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, 20 մլն դրամ):

Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրերից են՝ Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում լուսավորության ցանցի անցկացում, ընդհանուր բարեկարգում (Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան, 65 հազար եվրո), Ագարակ քաղաք մտնող մայրուղու հարեւանությամբ՝ 2,5 հա մակերեսով տարածքում «Հայ-իրանական բարեկամության» զբոսայգու կառուցում (Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան, 600 հազար եվրո), քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնում (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիր, 8 մլն դրամ), «Բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելով՝ պլաստիկ աղբից շինանյութերի ներմուծում» (Եվրամիություն, պետություն, համայնք, 749962.96 եվրո: Այն իրականացվում է Սյունիքի մարզի Կապան, Քաջարան, Մեղրի, Գորիս, Սիսիան եւ Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Եղեգնաձոր եւ Վայք համայնքներում. նախատեսվում է նշված համայնքներում պլաստիկը տարանջատել, հավաքել, մամլել, պահեստավորել եւ տեղափոխել Կապան, որտեղ կհիմնվի պլաստիկից շինանյութ ստանալու գործարան (կտեղադրվի հոսքագիծ): Ծրագիրը մեկնարկում է 2017 թվականից), Մեղրու Սբ Սարգիս եկեղեցու պահպանում ու որմնանկարների վերականգնում (ՀՀ մշակույթի նախարարության եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության միջեւ «Մեղրի քաղաքի Սուրբ Սարգիս (Սբ Հովհաննես) եկեղեցու պահպանության եւ որմնանկարների վերականգնման նպատակով ԱՄՆ դեսպանի մշակութային պահպանության հիմնադրամի կողմից դրամաշնորհի տրամադրման մասին» հուշագիր՝ կնքված 2016թ. սեպտեմբերի 16-ին, 450 հազար դոլար):

Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրերից, ներդրումներից են՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի «Լիճքվազ-Թեյի» ոսկու հանքավայրի շահագործում ստորգետնյա եղանակով («Լիճքվազ» ՓԲԸ, 11 մլն դոլար), Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործում ստորգետնյա եղանակով («Ղարագուլյաններ» ՓԲԸ, 4 մլն 78 հազար 700 դոլար), Վարդանիձոր գյուղում Մեղրու մանկապարտեզի մասնաճյուղի հիմնում («Լիճքվազ» ՓԲԸ, 37 մլն դրամ):

Ծրագրում մանրամասն ներկայացվել են նաեւ համայնքի զարգացման խոչընդոտներն ու դժվարությունները, ուժեղ եւ թույլ կողմերի, հնարավորությունների եւ սպառնալիքների վերլուծությունը, ինչպես նաեւ համայնքի ընդհանուր նկարագրությունը, սոցիալ-տնտեսական, ֆինանսական վիճակն ու կանխատեսումները:

Այսպիսով՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում Մեղրի համայնքն ակնկալում է առաջընթաց տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ, եւ հանքարդյունաբերությունից զատ զարգացած տեսնել նաեւ գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը: Նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում կձեւավորվեն նոր ենթակառուցվածքներ, որոնք կխթանեն վերոնշյալ ուղղությունների զարգացումը:

Կատարվելիք ներդրումները հնարավորություն կտան նախադպրոցական եւ արտադպրոցական կրթության ոլորտում ընդգրկել ավելի շատ երեխաներ, ակտիվացնել մարզական եւ մշակութային կյանքը, ընդլայնել կանաչապատ տարածքները, կազմակերպել կենտրոնացված աղբահանություն՝ ընդգրկելով համայնքի բոլոր բնակավայրերը:

Համայնքի զարգացման ծրագրի կատարման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել հետեւյալ փոփոխությունները.

- համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ 27,4 %-ով,
- համայնքի բնակչության թվաքանակի աճ՝ 5-6 %-ով,
- բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ 10-15%-ով,
- գյուղատնտեսական մթերքների արտադրության եւ իրացման աճ՝ 10-20%-ով:

meghri.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Ա

...Պարզել անցեալի իրենց պարտութեանց պատճառները, նորէն մոռացութեան տալ պատմութեան խրատականը եւ ապա, նոր աղէտներից զարնուած՝ վերստին սերտել պատմութեան դասերը - ահա՛ անհեռատես ազգերի ճակատագիրը:

Որքան մոռացկոտ, այնքան տկար ու դժբախտ է դա: Մոռացա՞ւ իր պատմութիւնը, ասել է՝ անխրատ է ժողովուրդը եւ պատժի արժանի:

Միշտ էլ ուժեղին պիտի պատկանի երկիրը. Յովբի այդ խօսքերով է ազգերին խրատում պատմութիւնը:

Ուժեղը, ճշմարտօրէն ուժեղը, որ արժանաւորն է, արի՛ն: Ճշմարիտ ոյժը, որ ոգու ոյժն է: Հզօր ոգին, որ քանակօրէն տկար Հելլադայի առջեւ ծունկի բերեց անծայրածիր Պարսկաստանը: Դա իտալական փոքրիկ երկրամասի ձեռքը դրեց աշխարհի բախտը: Դա Տիգրան Մեծի Հայաստանը վերածեց հզօրագոյն թագաւորութեան: Քաղաքապետութիւնը, որ Սպարտա կը կոչուէր, մնաց անխոցելի, քանի դեռ - հաւատարիմ Լիկուրգոսի սահմանադրութեան - կը գերադասէր պատերազմներում կորցնել իր կեա՛նքը եւ ոչ թէ վահանը, Հռոմը, որ պատգամներ կ՚արձակէր աշխարհին, ընկաւ, որովհետեւ նրա զօրավարները, որոնք մի ժամանակ կաւէ անօթներ կը գործածէին, այլեւս կը դժուարանային իրենց կաշառել փորձող ազգերի ներկայացուցիչներին ասելու. «Կը գերադասենք իշխել արծաթեայ եւ ոսկէ անօթներ գործածողների վրայ, քան թէ ոսկի եւ արծաթ ունենալ»: Ընկաւ եւ Հայաստանը, որովհետեւ անմիաբանութեան ոգին մեր ժողովրդից խլել էր իր անօրինակ արիութիւնից ազատօրէն օգտուելու կարելիութիւնը:

Երբե՛ք, ո՛չ ազգային թագաւորութեան դարերում, ո՛չ էլ այն ժամանակ, երբ Հայաստանը դաստակերտ կայսերաց եւ երկրորդ թագաւորութիւն պարսից կը կոչուէր, երբե՛ք տիրութեան ոգին չտկարացաւ Հայութեան մէջ: Ճիշտ է սակայն եւ այն, որ այդ ձիգ դարերի ընթացքում չեղաւ մի դէպք, որ հայութիւնը ընտանի պատճառներով կարողանար լիուլի օգտուել այդ ոգուց:

Հէնց սրանում է մեր ժողովրդի ողբերգականութիւնը:

Բ

Արիութի՛ւն:

Միակ ճշմարիտ կրօնը, առանց որի ոչինչ արժեն կրօնները:

Կեղծ է ամէն մի գրականութիւն, բարոյական, քաղաքական վարդապետութիւն, որ ոյժ եւ արիութիւն չէ ներշնչում իր դաւանողին:

Դատապարտելի է ամէն մի դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, որը արիադաւան եւ արի չէ դարձնում մարդը որպէս անհատ եւ հաւաքականութիւն:

Արիութի՛ւն - միակ ճշմարիտ բարոյականը:

Կորցնելով իրենց արիութիւնը - իմա իրենց դրական բոլոր առաքինութիւնները - ժողովուրդները կորցնում են իրենց գոյութեան բարոյական իրաւունքը: Անարին կորցնում է պատմութիւնից իրեն տրուած մասնաւոր առաքելութիւնը՝ իրագործելու մարդկային ցեղին օգտակար լինելու կարելիութիւնը: Այդպիսին դառնում է ընդունակ միայն անստեղծագործ եւ անփառունակ կեանքի, կարօտ

▶ 8

Մեղրու բերդը (դրվագ)

Մայր Հայաստանի մի պատառիկ

Պատգամ մեծաց

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

◀ 7

արտաքին օգնութեան: Նմանը ժամանակի ընթացքում դառնում է միջազգային պարազիտ, մինչդեռ ժողովուրդների կոչումն է լինել միջազգային արժէք եւ ազդակ:

Այդ տխուր եւ անարգական վիճակից ազգերին հեռու է պահում արիապաշտութիւնը:

Արիութի՛ւն, ժողովուրդներին բարոյապէս նեխելու վտանգից փրկող հոգեւոր աղն է դա:

Երբ կայ դա՝ չկայ վատը, ստորը, կամ առնուազը աննշան է դառնում սրանց ազդեցութիւնը անհատի թէ ժողովուրդների կեանքում:

Բարոյական արեւ է դա, որ կ՛առողջագործէ իր շրջապատը: Երբ կայ դա՝ կայ ե՛ւ մեծագործութիւն, ե՛ւ վեհութիւն, ե՛ւ անձնուիրութիւն: Պակասո՞ւմ է դա՝ այլեւս ոչինչ արժեն բարձր գաղափարները, ծրագիրները, տեսութիւնները, քանզի պակասում է նրանց իրականացնող ոյժը: Անարիութի՛ւն, ասել է՝ հոգեւոր սնանկութիւն:

Անարին ոչինչ է աւելացնում աշխարհի անկորնչելի հարստութեան: Դա յաճախ բարոյական մուրացիկ է, այլոց ճիգերից օգտուող: Անարին չէ ծառայում մարդկային քաղաքակրթութեան:

Յանձին Ալեքսանդր Մեծի՝ արիութիւնն էր, որ յունական մշակոյթը Ասիա մտցրեց: Դա էր - նախավկաների յաղթական արիութիւնը - որ Նազովրեցու վարդապետութիւնը պարտադրեց բարբարոսներին: Դա էր, որ նոր հորիզոնների տէր դարձրեց մարդկութիւնը, սանձելով ծովերի ամեհութիւնը, մեղմելով դաժանութիւնն անապատների եւ նուաճելով օդը:

Արին է յանդգնողը, անձնազոհը, մարդասէրը:

Արիութիւնն է շարժում պատմութեան ընթացքը:

Մեծ սիրտ, ազնիւ նկարագիր, վսեմ մտածում - արիութեան հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միեւնոյն արեւի:

Արիութի՛ւն: Կորցնելով այդ բարձր յատկութիւնը՝ ժողովուրդները կորցնում են իրենց կարողութիւնները անկաշկանդ կերպով զարգացնելու եւ կատարելագործելու կարելիութիւնը: Անարիանալով՝ նրանք ընկնում են օտար լծերի տակ, կորցնում իրենց անկախութիւնը - միակ հոգեւոր մթնոլորտը, որի մէջ միայն հնարաւոր է ցեղերի առանձնայատուկ հանճարի փթթումը:

Գ

«Դուք ինքնին գիտէք զքաջութիւն աշխարհի Հայոց»:

Այդ դիւցազնական առաքինութիւնը երբեք չտկարացաւ մեր ժողովրդի հոգու մէջ, մինչեւ մեր քաղաքական անկախութեան վախճանը, որից յետոյ հայ ձեռքը պիտի զրկուէր դարերով զէնք կրելու իրաւունքից:

Հայութիւնը չգիտէ իր պատմութիւնը, ասել է՝ չգիտէ օգտուել իր պատմութիւնից - ահա՛ իր դժբախտութեան ակն ու աղբիւրը: Նա ծանօթ չէ իր արիական անցեալին, իր հաւաքական դիւցազնականին եւ դրա համար էլ - յուրախութիւն իր գոյութեան թշնամիներին - նա հաւատում է ամէն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ոյժին, դրա համար էլ իր ամբողջութեան մէջ նա պարտուողական է: Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը աւելի նահատակ է, սուրբ, քան ռազմիկ եւ հերոս:

Պատմագիտօրէն տգէտ՝ նա իր նախնիքներին համարում է իրեն բնութենակից, որոնց, սակայն, հոգւով այնքան կը նմանի, որքան աղաւնին՝ արծուին: «Մեզ պէս անռազմասէր է եղել եւ հին հայը, այլապէս ինչո՞ւ պիտի կործանուէր մեր թագաւորութիւնը»,- այսպէս է տրամաբանում օրուայ հայութիւնը - մասնաւորապէս նրա հակայեղափոխական մասը - եւ իրեն ոչինչ չհամարելով, ոչինչ է ուզում աշխարհից, բացի օտար դռներում իր անստեղծագործ գոյութիւնը քարշ տալու իրաւունքից:

Նա չգիտէ, որ հայկական բոլոր արքայացեղերը կործանուել են ո՛չ թէ արիութեան պակասի պատճառով, այլ՝ մեր ցեղի ղեկավար տարրերի առանձին երկպառակութիւնների եւ այլ պատճառների երեսից: Ինքնակործան են եղել գրեթէ մեր բոլոր թագաւորութիւնները:

Նա ոչինչ, կամ շատ քիչ բան գիտէ իր ցեղի հնաւանդ ռազմունակութեան ու ռազմական մեծագործութիւնների մասին, եւ դրա համար էլ անհաւատ է դէպի իր բազուկը, անյոյս՝ դէպի իր ապագան: Նա չգիտէ, որ հայ արիութիւնը հայոց աշխարհի համար դարերով կատարել է հոգեւոր շանթարգելի դեր՝ չէզոքացնելով ու զինաթափելով բազում արտաքին վտանգներ: Եթէ Հայաստան արշաւող թշնամի հորդաները ծով ալիքներ էին, ապա հայկական արիութիւնը ծովափեայ ժայռ էր, որին կը զարնուէին ու կը ցնդէին արտաքին թշնամութեան յորձանքները: Օրուայ հայութիւնը, այո՛, չի ճանաչում իր դասական արիների համաստեղութիւնը. նա պաշտամունք չունի դէպի անմահ արիները, նա չի՛ դաստիարակւում նրանց մեծագործութիւններով - ահա՝ մեր դժբախտութիւնը:

Եւ մեղաւորը ժողովուրդը չէ, այլ՝ այն տարրը, որի ջանքերով ցեղային ինքնաճանաչութեան է բերւում ժողովուրդը - մեր մտաւորականութիւնն է մեղաւոր:

Մէկից աւելի անգամ դժբախտութիւն եմ ունեցել լսելու ազգային պատմութիւն դասաւանդող հայ ուսուցչին եւ խորապէս ցաւել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռեալ շեշտերով խօսում է մեռելների մասին: Պատմութիւնը նրա համար անհոգի կմախք է եւ ո՛չ թէ բաբախուն սիրտ: Նա հետեւակ գիտելիքներ ունի մեր պատմութեան այս կամ այն շրջանի մասին, գիտէ ցամաք անցքեր, թուեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի եւ սիրտ չէ՛ դնում իր դասերի մէջ: Միեւնոյն տրամադրութեամբ նա խօսում է ե՛ւ Տիգրան Մեծի, ե՛ւ Վեստ Սարգիսի մասին:

Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թէ ինչպէ՛ս պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործութիւններից հիացած, ամէն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կը մօտեցնէր՝ կը դժուարանար չբացագանչել՝ «ճերմակաձին գինի խմէ»:

Ամօթի զգացումը չէ՛ այրում նրան, երբ իր խօսքը հայ խռովասէր նախարարի չարագործութիւնների մասին է:

Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ՛ նրա աւանդած պատմութիւնը, այլ՝ անհոգի հնախօսութիւն, քանզի իրեն կը պակսի ազգային հպարտանքի նուիրական զգացումը:

Գերազանցօրէն հայրենապաշտ - ահա՛ թէ ինչպիսի՛ն պիտի լինի պատմութեան դասատուն: Այդպիսին չէ՞ - ասել է՝ նրա տեղը դպրոցը չէ: Ասել է՝ բարոյապէս ազատ չէ իր ձեռքն առնելու մեր ցեղի կեանքի սրբազան գիրքը:

«Արաքս», 1930թ., թիւ 25, 26, 27

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 05.03.2017թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: